

«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ.65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ  
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

Առարկա Անգլերեն

Մասնակից Թամարա Հյարապետյան

Ղեկավար Գայանե Վարդանյան

Թեմա Հաղորդակցության հիմնախնդիրը հոգեբանության մեջ

Երևան, 2022թ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	2
Հաղորդակցության հիմնախնդիրը հոգեբանության մեջ.....	4
Հաղորդակցության տեսակները և ֆունկցիաները.....	10
Հաղորդակցության դժվարությունները.....	14
Գրականություն.....	19

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին ժամանակներս հոգեբանական տարբեր ուղղությունները ներկայացնող բազմաթիվ գիտություններին սկսել է հետաքրքրել հաղորդակցման խնդիրը, որի վերաբերյալ նրանք ձգտում են բացահայտել տարբեր օրինաչափություններ և մեխանիզմներ:

Հաղորդակցման տարբեր խնդիրներին վերաբերող բազմաթիվ աշխատանքների աճը պատահական չէ, դա գիտնականների պատասխանն է ժամանակի պահանջին՝ ոչ միայն մարդու հոգեկան կյանքի ամբողջական պատկերը ստանալը և բնականում սոցիալական փաստերի գործունեությունները

տեսնելն է կարևոր, այլ նաև այդ բոլոր փաստերը արդյունավետ կերպով դաստիարակության մեջ,

աշխատանքում, կենցաղում և մարդկանց բուժման գործում կիրառել սովորելն է: Հաղորդակցումը

մարդկանց միջև ընթացող բարդ փոխազդեցության գործընթաց է, որն իր մեջ պարունակում է ինֆորմացիայի, փորձի գիտելիքների, կարողությունների և գործունեության

արդյունքների փոխանակություն, ինչպես նաև հասկացում և ընկալում գրուցակցին: Մեր թեմայի այժմեականությունը կայանում է նրանում, որ հենց հաղորդակցման պրոցեսում են ձևավորվում, դրսևորվում և իրականանում միջանձնային փոխհարաբերությունները: Այս պրոցեսում է յուրացվում փորձը, կուտակվում գիտելիքները, ձևավորվում պրակտիկ հմտությունները և ունակությունները, մշակվում հայացքներն ու համոզմունքները, բնավորությունն ու աշխարհայացքը:

Յուրաքանչյուր մարդ մի շարք հաստատուն բնութագրերի՝ հոգեկան պրոցեսների, հոգեվիճակների և անձնային առանձնահատկությունների ձևավորման, ինչպես նաև այդ առանձնահատկությունների կառուցվածքի հիման վրա է կառուցում իր փոխհարաբերությունները, և վերջինիս արդյունավետությունը կախված է վերոհիշյալ առանձնահատկությունների հարաբերակցությունից:

Նշանակալի է խմբային համախմբվածության ընթացքում կոնստրուկտիվ, դեստրուկտիվ հաղորդակցման ձևերի ուսումնասիրումը:

Նպատակ. Ինչպես գիտենք, հաղորդակցումը հասարակական սուբյեկտների (անձ, սոցիալական

խումբ) փոխներգործության գործընթաց է, որի ժամանակ տեղի է ունենում ինֆորմացիայի, փորձի, գիտելիքների, կարողությունների և գործունեության արդյունքների փոխանակություն:

Հաղորդակցման դաստիարակչական նշանակությունը կայանում է ոչ միայն նրանում, որ այն մեծացնում է մարդու ընդհանուր տեսահորիզոնը և նպաստում հոգեկան կազմավորումների, պրոցեսների, վիճակների և առանձնահատկությունների զարգացմանը, որոնք էլ նպաստում են

գործունեության հաջող կատարմանը, այլև այն հանդիսանում է պարտադիր պայման մարդու ընդհանուր ինտելեկտի ձևավորման համար, և նախ և առաջ բազմաթիվ պերցեպտիվ, մեմորիկ,

ճաշակային (ոճային) նրբանկատության և մտածական բնութագրերի հիմք: Հաղորդակցումը որպես

գործընթաց, մեծ կարևորություն ունի մարդու հուզական ոլորտի զարգացման համար, հաղորդակցվելիս միմյանց հետ, մարդիկ գնահատում են միմյանց գործողությունները, այս կամ այն կերպ արձագանքում դիմացինի վերաբերմունքին և այլն: Այսինքն անձի զարգացումը տեղի է ունենում հաղորդակցման պրոցեսում, միջանձնային

փոխհարաբերություններում, ուստի մեր նպատակն է բացահայտել, թե որոնք են հաղորդակցման

ընթացքում հանդիպող դժվարությունները, որոնք խոչընդոտում են տարաբնույթ

փոխհարաբերությունների ստեղծմանը կամ պահպանմանը:

Թեմայի նպատակից բխում են հետևյալ խնդիրները`

Ուսումնասիրել թեմային վերաբերվող գիտական գրականությունը,

Ուսումնասիրել հաղորդակցման տեսակները, ֆունկցիաները և հաղորդակցման

ընթացքում հանդիպող դժվարությունները:

Ուսումնասիրել դեստուկտիվ և կոնստրուկտիվ հաղորդակցման առանձնահատկությունները

միջանձնային փոխհարաբերություններում:

Օբյեկտը. Մեր աշխատանքի օբյեկտն անձն է, որի զարգացումը տեղի է ունենում

հաղորդակցման պրոցեսում:

Առարկա. Մեր աշխատանքի առարկան հաղորդակցումն ու տարբեր տարիքային անձանց միջև

հաղորդակցման դժվարությունների հոգեբանական մեխանիզմներն են:

Չաղորդակցության հիմնախնդիրը հոգեբանության մեջ

Չաղորդակցումը մարդկային աշխարհը բնութագրող կարևոր հասկացություն է: Այն մարդկանց միջև կապ է, որի ընթացքում առաջանում է հոգեկան շփում, որն էլ դրսևորում է ինֆորմացիայի փոխանակման ձևերով:

Վերջին տարիներին խորհրդային հոգեբանության մեջ դիտվում է հոգեբանական շփման մեթոդաբանական, տեսական, էքսպերիմենտալ պրոբլեմների նկատմամբ ուշադրության ուժեղացում: Այս պրոցեսում իր մեծ ներդրումն է ունեցել Բ. Անանևը: [1]

Նա դեռևս երեք տասնամյակ առաջ ցույց տվեց հաղորդակցման կատեգորիայի հաշվի առնելու

կարևորությունը մյուս դետերմինանտների շարքում, որոնք պայմանավորում են մարդու հոգեկան դրսևորումն ու զարգացումը: Անանևը ընդգծում է, որ հաղորդակցության՝ որպես գործունեության, հատուկ և գլխավոր բնութագիր է այն, որ նրա միջոցով մարդը կառուցում է իր

հարաբերությունները այլ մարդկանց հետ: Արտահայտելով այդ միտքը իր վերջին խոշոր աշխատության մեջ, նա գրում է. «Մարդու վարքը ոչ միայն նրա սոցիալական գործունեության

տեսակների բարդ կոմպլեքս է հանդիսանում, որոնց օգնությամբ առարկայանում է նրան շրջապատող բնույթը, այլ նաև որպես հաղորդակցում, մարդկանց հետ տարատեսակ սոցիալական

կառույցներում պրակտիկ փոխազդեցություն» [1, էջ 129-266]:

Անանևը, բացահայտելով հաղորդակցման տեսքով իրականացվող փոխազդեցության հոգեբանական

նշանակությունը բազմիցս նշում է, որ աշխատանքի ուսուցման խաղի և գործունեության

մյուս բոլոր տեսակների պարտադիր բաղադրիչ հանդիսանալով, այն դառնում է մի պայման, առանց

որի անհնար է մարդկանց կողմից իրականության ճանաչումը, նրանց մոտ այդ իրականության

նկատմամբ էնոցիոնալ արձագանքի ձևավորումը: Անանկը հաղորդակցման հիմնական

բնութագրիչները նաև դիտարկում է նրանց մեջ հասարակականի և ինդիվիդուալի (անհատականի)

համադրության տեսանկյունից: Նա նշում է, որ միջանձնային փոխազդեցությունը՝

հաղորդակցությունը, միշտ պայմանավորվում է հասարակական հարաբերությունների

համակարգում, որում նա ներառվում է, բայց քանի որ այն միշտ հանդես է գալիս որպես

միջանձնային կապ և գործունեության անհատական ձև, հաղորդակցման կառուցվածքում և

դինամիկայում անհնար է առանձնացնել անձնականը հասարակականից, նրանց միջև կտրուկ

սահման անցկացնել:

«Հաղորդակցումը,- գրում է նա,-որքան սոցիալական, այնքան էլ անհատական երևույթ է: Այդ պատճառով էլ հաղորդակցման (անհատական արտահայտման ձևը և մեխանիզմը հանդիսանում է

խոսքը) ամենակարևոր միջոցի՝ լեզվի մեջ այդքան անբաժանելի կերպով կապված են սոցիալականը և

անհատականը:

Դիմախաղը և ժեստիկուլացիան, այսինքն՝ հաղորդակցման ոչ ոչ վերբալ ձևերը, դառնում

են հենց այդպիսին այն ժամանակ, երբ վարքի էքսպերսիան կատարում է կոմունիկատիվ ֆունկցիա»:

[1]

Ավելի ուշ նա ուշադրություն է դարձնում հաղորդակցության տարբեր

իրադրությունների ազդեցությանը (որոնց մեջ մասնակցում է մարդը) նրա խելքի,

զգացմունքների, կամքի և, ընդհանուր առմամբ անձի զարգացման վրա:

Ուսուցիչների և աշակերտների մասնակցությամբ հաղորդակցման իրադրությունների

օրինակների վրա նա հոգեբանորեն վառ կերպով ցույց է տալիս, թե ինչպես է ուսուցիչը

աշակերտներին դնում այնպիսի իրադրության մեջ, երբ նրանց ինտելեկտը ակտիվանում է,

զգացմունքները ձեռք են բերում ստենիկ բնույթ, մոբիլիզացվում է կամքը: Աշակերտները

վստահությամբ են վերաբերվում շրջապատողներին և ակտիվորեն հաղորդակցվում են նրանց հետ:

Նա բերում է նաև այլ իրադրությունների օրինակներ, երբ ուսուցիչը դասի ընթացքում իր

անկարող դաստիարակչական միջոցներոց ճնշում է աշակերտների մտավոր ակտիվությունը, նրանց

մոտ առաջ է բերում նեգատիվ (բացասական) ապրումներ, փաստորեն դրդում է մարդկանց նկատմամբ

կասկածամտություն և նրանց հետ հաղորդակցման վախ է ներշնչում:

Ուսուցչի կողմից ստեղծված իրադրությունները աշակերտների մոտ առաջացնում է

այնպիսի վիճակ, որը բնութագրում է նրա խելքը, զգացմունքները, կամքը միայն այդպիսի

իրադրությունների առկայության դեպքում: Նման իրադրությունների կրկնման դեպքում

այն կարող է աշակերտների մոտ ամրապնդել և դառնալ սովորական:

Բայց, Բ. Անանևի կարծիքով, հաղորդակցման մեջ անձնային որակի ձևավորման այդ

հոգեբանական մեխանիզմի կողքին կա ևս մեկ ասպեկտ, քանի որ հաղորդակցման մեջ միշտ առկա է

մարդու կողմից մարդու ընկալման հանգամանքը և միաժամանակ նրանցից յուրաքանչյուրի

կողմից սեփական անձի ճանաչման հանգամանքը, ինչպես նաև մի մարդու կողմից մյուսի վրա

ներազդելու հանգամանքը, ապա հաղորդակցումը միշտ դառնում է մարդու մոտ այլ մարդկանց

նկատմամբ վերաբերմունքի, ինչպես նաև սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի, ձևավորման

ամենաուժեղ միջոցը:

Հաղորդակցման հոգեբանության պարզաբանման վերաբերյալ բավականին եզակի և հսկայական

ներդրում է ունեցել Վ. Մյասիշևը: [5]

Իր աշխատություններում խորը գիտականությամբ նա վերլուծել է մեր կողմից

քննարկվող երևույթի հոգեբանական էությունը:

Վ. Մյասիշևը, պարզաբանելով հաղորդակցման ընթացքի բովանդակային և ձևական

բնութագրիչները առանց շեղվելու հաղորդակցվողների խոսքային գործունեության

ուսումնասիրություններից, ձգտում էր ուսումնասիրել հաղորդակցումը որպես որոշակի

ձևով միմյանց արտացոլող, միմյանց վերաբերող և միմյանց վրա ազդող կոնկրետ անձանց

փոխգործունեություն: Նա արտահայտել է այն միտքը, որ մարդկանց հաղորդակցումը

հանդիսանում է մարդկանց փոխգործունեության տեխնիկական միջոցներով կամ անմիջական

այնպիսի գործընթաց, որտեղ կարելի է հատուկ առանձնացնել սերտորեն փոխկապակցված 3 բաղադրիչ՝

հաղորդակցման մասնակիցների միմյանց հոգեկան արտացոլումը, հարաբերությունները մեկը մյուսի հետ և մեկը մյուսի նկատմամբ վերաբերմունքը:

Վ. Մյասիշկի աշխատություններում մեծ տեղ է հատկացված այն բանի պարզաբանմանը, թե ինչպես է մարդու նկատմամբ վերաբերմունքը ազդում այդ մարդու հետ հաղորդակցվող մարդկանց

զգացմունքների, կամքի և անձնային այլ հիմնական հատկությունների վրա: Բայց, նա իր աշխատություններում, որոնք անմիջականորեն վերաբերում են հաղորդակցման

հոգեբանությանը, մանրամասն քննարկել է այն գործոնների պրոբլեմները, որոնք

պայմանավորվում են մարդու այս կամ այն վերաբերմունքի ձևավորումը՝ հստակորեն առաջացող

հաղորդակցման միջոցներում, որոնք մարդը իր շրջապատող մարդկանց հետ հաղորդակցվելիս

անընդհատ դրսևորվում է: Մարդու մոտ ի ծնե առկա հիմքերի նշանակությունը, որոնք

ձևավորվում են այն մարդկանց հետ հարաբերությունները, հաշվի առնելով՝ նա հատուկ նշում է

վարքի այն ձևերի դերը, որոնցում այդ հարաբերությունները արտահայտվում են,

տպավորությունները և ապրումները, որոնք մարդը կուտակում է այլ մարդկանց հետ

փոխհարաբերությունների ընթացքում:

Այսպես. «Մարդու վերաբերմունքի և հոգեբանության մեջ նրա դերի խնդրի մասին»

աշխատության մեջ նա գրում է. «Փոխհարաբերությունները էական դեր են խաղում

փոխգործունեության պրոցեսում և իր հերթին հանդիսանում են փոխգործունեության

արդյունք: Այն ապրումները, որոնք առաջանում են փոխգործունեության ընթացքում,

ամրապնդում, քայքայում կամ վերակառուցում են հարաբերությունները»: [5, էջ 97]

Հետագայում նա այդ նույն միտքը ձևակերպել է մի փոքր այլ կերպ. «... վարվելակարգը՝

մեղմ, թե կոպիտ, թեկուզ և կոպիտ, ճնշող, թե ոգևորող ձևավորում է հաղորդակցման

պահանջմունք» (նույն էջում 97): Վ. Մյասիշկը անընդհատ հիշեցնում էր, որ շփման,

հաղորդակցման ընթացքում առաջացած հարաբերությունների օբյեկտ և սուբյեկտ լինելով՝

անձը միաժամանակ հանդիսանում է նաև որպես որոշակի հարաբերությունների սուբյեկտ այդ

հաղորդակցության մեջ: Եվ չնայած մարդը կարող է դա չգիտակցել, բայց, այնուամենայնիվ, իր

նկատմամբ շրջապատի վերաբերմունքը մեծամասամբ կախված է իրենցի: Նշենք նաև, որ հենց

անձից է կախված մարդկանց հետ հաղորդակցումից, շփումից առաջացած ապրումների բնույթը և

այն գնահատականները, որոնք նա տալիս է այդ մարդկանց:

Չաշվի առնելով մարդու կյանքի փորձի ազդեցությունը այլ մարդկանց հետ

փոխգործունեության ընթացքում՝ աչքաթող չարվեց նաև հաղորդակցման հոգեբանության համար

այնպիսի կարևոր խնդիր, ինչպիսին է մարդու տարիքից կախված հաղորդակցման գործունեության

բովանդակային և ձևական բնութագրերի տարբերության պարզաբանումը:

Իր բազմաթիվ աշխատություններում Մյասիշևը ներկայացրել և համեմատել է հասուն

մարդու և երեխայի (նախադպրոցականի, դպրոցականի) այլ մարդկանց հետ արտացոլման, նրանց

նկատմամբ վերաբերմունքի և հարաբերության հատկությունները: Իհարկե, այստեղ էլ նա իր աշխատությունում հստակորեն բացահայտել է կախվածությունը, որը առկա է նրանում, թե ինչպես

է մարդը իրեն պահում այլոց նկատմամբ, ինչպես է հաղորդակցվում նրանց հետ և հաղորդակցման

ինչպիսի փորձ է կուտակել այդ ընթացքում: Տվյալ դեպքում ուշադրությունը կենտրոնացնում է պայմանների համակարգի վրա, որը ձևավորում է մարդու, որպես անձի, այն սոցիալ-հոգեբանական

այն իրավիճակի զարգացումը, որը նախ և առաջ որոշում է մարդու նեղ և լայն շրջապատի հետ

հարաբերությունների հետ բովանդակությունը, աստիճանը, կառուցվածքը և արտահայտման ձևը:

Մյասիշևը փորձել է լուծել նաև գիտական անհամեմատ ավելի բարդ խնդիր. այն է՝ պարզել

կապը հաղորդակցման և հաղորդակցման մասնակիցների հոգեկան գործընթացների միջև:

Ուսումնասիրելով տվյալ խնդիրը ներդրելով հիվանդների մոտ՝ նա ցայտուն կերպով նկարագրել

է մարդու ակտիվության, պերցեպտիվ, ինտելեկտուալ, հուզական գործընթացների վրա

հաղորդակցման պայմանների սոցիալ-հոգեբանական և դիֆերենտ-հոգեբանական մեխանիզմների

ազդեցությունը: Նա հետևյալ կերպ է մտածում, հաղորդակցման ներքին սուբյեկտի հիմքում առաջացած թերության դեպքում, ինչպիսին հանդիսանում է հարաբերությունները, մարդու մոտ առաջանում է քիչ թե շատ ուժեղ և հաստատուն ներքին կայունության վիճակ, որը տարբեր

մարդկանց մոտ միաձև չէ, բայց անպայման ազդում է նրանց ընկալման, հիշողության, մտածողության, ուշադրության և կամային ուղորտի վրա:

Պետք է նշել, որ Վ. Մյասիշևը այդ հարցին անդրադարձել է նաև բժշկական տեսանկյունից, որն պահանջում է հատուկ ուշադրություն և ուսումնասիրություն:

Այժմ կարող ենք անդրադառնալ հաղորդակցման խնդրին խորհրդային հոգեբան Ա. Լեոնտևի տեսություններում: [4, էջ 73]

Չեղինակը իր մեծագրություններում նշում, է որ անհատի կյանքը դիտարկվում է

երկակի՝ որպես հաղորդակցության սուբյեկտ և որպես առարկայական գործունեության սուբյեկտ:

Անհատը իրականում էլ կապված է ոչ միայն առարկայական աշխարհի, այլ նաև ուրիշ մարդկանց հետ:

Չաղորդակցության պրոցեսում անհատը յուրացնում է հասարակական փորձը և

«սոցիալականացվում»: Անհատների հարաբերությունների առարկայական աշխարհի հետ ոչ միայն

գոյություն չունեն հաղորդակցությունի դուրս, այլ հենց հաղորդակցությունն է

ձևավորում այդ հարաբերությունների զարգացմամբ: Չասարակական կայացման փուլերում

մարդկանց աշխատանքային գործունեությունը և շփումը լայն իմաստով անմիջականորեն

ծուլված են իրար հետ, դրանց միասնությունը, իհարկե, պահպանվում է նաև հետագա զարգացման

ընթացքում: Այդ պատճառով էլ առարկայական գործունեությունը և հաղորդակցությունը չեն

կարող ընկալվել որպես մարդու կենսագործունեության տարբեր տարրեր: Չաղորդակցությունը

ձեռք է բերում ինքնուրույն բնույթ, կարող է առանձնացվել առարկայական

գործողություններից, երբ դրա գլխավոր ձևը դառնում է խոսքային հաղորդակցումը:

Չաղորդակցման գեներտիկական նախադրյալներն են նրա բնական, բնագաղային-հուզական

ձևերը: Բայց ոչ թե դրանց զարգացումն է ծնունդ մարդուն բնորոշ հաղորդակցման ձևեր, այլ

դրանք ծագում են սուբյեկտ-առարկայական գործունեությանընթացքում սուբյեկտի

տրանսֆորմացիայի արդյունքում, որի մեջ առանձնացվում են հատուկ գործողություններ՝

ուղղված ուրիշ մարդու՝ մասնակցի վրա: Գործունեության նման տրանսֆորմացիան կայանում է

նրանում, որ սուբյեկտ-օբյեկտային հարաբերությունները միայն միջնորդավորվում են

սուբյեկտ-սուբյեկտային հարաբերություններով: Սակայն սուբյեկտ-սուբյեկտային

հարաբերությունները շարունակում են գոյություն ունենալ նաև ինքնուրույն:

Սկզբնապես, դրանք իրականացվում են բնական, ուղիղ ձևերով: Մեկ այլ մադը դրանցում

ներկայացնում է որպես օբյեկտի առանձնահատուկ պահանջմունքի կոնկրետացում:

Չակադրվելով Ա. Լեոնտևին՝ խորհրդային մեկ այլ անվանի հոգեբան՝ Լուսովը

հաղորդակցման վերաբերյալ իր տեսությունը առերեսում էր նրա գործունեությանը: Նա

նշում էր, որ, իհարկե, մարդու սոցիալական կեցության վերլուծության մեջ կարևոր դեր ունի

գործունեությունը, սակայն անհատի գործունեությունը ինքն իր համար գոյություն

չունի: [8] Այն կապված է ուրիշ մարդկանց գործունեությունների հետ: Ի տարբերություն Ա.

Լեոնտևի՝ բացի «սուբյեկտ-օբյեկտ», «սուբյեկտ-առարկա» հարաբերություններից կարևորում է

«սուբյեկտ-սուբյեկտ(ներ)» հարաբերություն: Ծագում է անհրաժեշտություն բացահայտել

հաղորդակցման մեկ այլ կողմ ևս, որ ցույց է տալիս մարդու կեցության մեկ այլ կարևոր կողմը:

Մարդու սոցիալական կեցությունը ներառում է ոչ միայն առարկայական աշխարհի նկատմամբ

հարաբերությունները, այլ նաև մարդկանց, որոնց հետ մարդը մտնում է ուղղակի կամ

միջնորդավորված կապերի մեջ: Չակադրակցման մեջ անհատները ֆիզիկապես և հոգեպես ստեղծում

են միմյանց: Այդ պրոցեսն իրականանում է գործունեության, պատկերացումների,

գաղափարների, դիրքորոշումների, հետաքրքրությունների փոխադարձ փոխանակում, զարգանում

և իրականանում է «սուբյեկտ-սուբյեկտ(ներ)» հարաբերությունների համակարգը:

Չակադրակցումը յուրահատուկ ինքնուրույն ակտիվության ձև է, արդյունքը՝ ոչ թե վերափոխված

առարկան է, այլ ուրիշ մարդկանց հետ հարաբերությունները: Սուբյեկտի

կենսագործունեության էական, կարևոր կողմ հանդիսանալով՝ հաղորդակցումը հոգեկանի ամբողջ

համակարգի դետերմինանտ է. դրանք ներքինից իրար հետ կապված են: Չակադրակցման

գործընթացում իրականանում է սուբյեկտի ներաշխարհի «պրեզենտացիա» մյուս

սուբյեկտ(ներ)ին: Ըստ այդմ, հաղորդակցման մասնակիցները կատարում են որակապես նոր գործողություններ՝ ի համեմատ մասնակիցների առանձին-առանձին կատարած գործողությունների: Հաղորդակցումը մասնակիցներից յուրաքանչյուրին դետերմինացնում է ու հետևաբար կարևոր պայման է անհատականության, զարգացման և արտահայտության համար: Հաղորդակցումը հիմնական ոլորտն է, որտեղ ներկայացվում են մարդուն բնորոշ հույզերն ու բոլոր հոգեկան վիճակները, որոնք անհրաժեշտ են անձի հոգեբանական որակների, գիտակցության և ինքնագիտակցության ձևավորման համար: Այսպիսով, այս վերջին երկու տեսությունները, բացատրելով հաղորդակցումը որպես հոգեբանական պրոցես, նշում են 2 կարևոր կողմեր: Դրանք կարևոր ձևավորող նշանակություն ունեն, նախապայման են հանդիսանում անձի զարգացման, անձնային աճի, ձեռքբերումների, նվաճումների և ինքնաակտուալիզացիայի համար:

#### Հաղորդակցության տեսակները և ֆունկցիաները

Հաղորդակցության մասին խոսելով, սովորաբար, նկատի է առնվում հաղորդվելիքի փոխանցման և ընդունման պրոցեսը՝ վերբալ և ոչ վերբալ միջոցների օգնությամբ, որոնք ներառում են հակառակ կապը, որի արդյունքում տեղի է ունենում ինֆորմացիայի փոխանակում հաղորդակցման մասնակիցների միջև, նրա ընկալումը և ճանաչումը, ինչպես նաև նրանց ազդեցությունը միմյանց վրա:

Հաղորդակցման կառուցվածքի մեջ են մտնում.

Կոմունիկատիվ-ինֆորմացիոն կոմպոնենտը (բաղադրիչը), որը նշանակում է հաղորդվելիքի ընդունում և փոխանցում և, որը ենթադրում է հակադարձ կապ, որի հիմքում ընկած է հոգեբանական կոնտակտը:

Ճանաչողական ասպեկտը, որը հիմնված է մարդկանց՝ մեկը մյուսի ընկալման և հասկացման պրոցեսի վրա:

Ինտերակտիվ (կոնտակտային) կողմը, որը կապված է փոխազդեցության, վարքի պրոցեսի հետ:

Առանձնացվում են հաղորդակցման այնպիսի տեսակներ, ինչպես միջանձնային,

խմբային և միջխմբային, մասսայական, վստահելի և կոնֆլիկտային, ինտիմ և կրիմինոգեն,

գործնական և անձնական, անմիջական և միջնորդավորված, թերապևտիկ և անբռնազբոսիկ:

Չաղորդակցումը հնարավոր է միայն նշանային համակարգի օգնությամբ: Տարբերվում են հաղորդակցման վերաբերյալ միջոցներ (բանավոր և գրավոր խոսք) և ոչ վերբալ(ոչ խոսքային)

միջոցներ (դիմախաղ, ժեստեր):

Այդ դեպքում, երբ հաղորդակցումը իրականացվում է ոչ խոսքային միջոցների օգնությամբ, շատ կարևոր են ձեռքերի ժեստերը, քայլվածքի, ձայնի առանձնահատկությունները, ինչպես նաև դեմքի արտահայտությունը (միմիկա), աչքերի (միկրոմիմիկա), դիրքը, ամբողջ մարմնի շարժումը (պանտոմիմիկա), դիստանցիան և այլն: Ընդ որում դեմքի արտահայտությունը երբեմն բառերից ավելի լավ է խոսում զրուցակցի նկատմամբ վերաբերմունքի մասին:

Միջանձնային հաղորդակցման մեջ սովորաբար օգտվում են գրավոր և բանավոր խոսքից: Գրավոր խոսքի առավելությունը որոշիչ է դառնում այնտեղ, որտեղ անհրաժեշտ են յուրաքանչյուր բառի ճշգրտությունը և պատասխանատվությունը:

Որպեսզի հմտորեն օգտվել գրավոր խոսքից, անհրաժեշտ է հարստացնել բառապաշարը: Բանավոր խոսքը ունի իր կանոններն ու նույնիսկ քերականությունը: Նրա հիմնական առավելությունը գրավորի նկատմամբ կայանում է դրա տնտեսման մեջ, այսինքն՝ ինչ-որ մտքի բանավոր փոխանցման համար պահանջվում է ավելի քիչ բառեր, քան գրավորի համար: Բանավոր խոսքի թերությունները հանդիսանում են խոսքային սխալները, բազմանշանակությունը:

Բանավոր խոսքի առավելությունները արտահայտվում են այնտեղ, որտեղ պետք է դաստիարակել, ազդել, հոգեպնդել:

Չաղորդակցման արվեստը ենթադրում է 1. գրավոր խոսքի անթերի տիրապետում, ինչը ապահովվում է կրթությամբ, 2. բանավոր խոսքի լավ տիրապետում, 3. բանավոր և գրավոր խոսքի օպտիմալ համադրման կարողություն տարբեր իրադրություններում:

Չաղորդակցման ոչ վերբալ միջոցները պետք են, մասնավորապես, այն բանի համար, որպեսզի կարգավորվի հաղորդակցման պրոցեսի ընթացքը, զրուցակիցների միջև ստեղծել հոգեբանական

կոնտակտ, արտահայտել հույզեր: Որպես կանոն, նրանք չեն կարող ինքնուրույն փոխանցել բառերի ուղիղ իմաստը, բացառությամբ որոշ ժեստերի:

Այս միջոցների ամբողջությունը կարելի է համեմատել սիմֆոնիկ նվագախմբի հետ, իսկ բառը՝ նրա մենակատարների հետ: Ի տարբերություն խոսքի, հաղորդակցման ոչ վերբալ միջոցները ամբողջությամբ չեն գիտակցում ինչպես խոսացողի, այնպես էլ լսողների կողմից: Ոչ ոք չի կարող իր բոլոր վերբալ միջոցները ամբողջովին ղեկավարել:

Չաղորդակցման ոչ վերբալ միջոցները բաժանվում են 3 խմբերի.

Վիզուալ

կինեսիա (ձեռքերի, ոտքերի, գլխի շարժում)

հայացքի ուղղություն և վիզուալ կոնտակտ

աչքերի արտահայտություն

դեմքի արտահայտություն

դիրք (մասնավորապես, լոկալիզացիա)

մաշկային հակազդում

դիստանցիա (զրուցակիցների միջև տարածություն, պերսոնալ տարածություն)

հաղորդակցման օժանդակ միջոցներ, այդ թվում մարմնակառուցվածքի

առանձնահատկությունները (սեռական, տարիքային) և դրանց վերածոխման միջոցներ

(հագուստ, ակնոցներ, զարդեր, ծխախոտ, մորուք և այլն):

Ակուստիկ (ձայնային)

կապված խոսքի հետ (ինտոնացիայի, բարձրություն, տոն, ռիթմ, խոսքային դադարներ)

խոսքի հետ կապ չունեցող (ծիծաղ, լաց, հազ, հևոցներ և այլն)

Տակտիլացիան (կապված հպումների հետ)

Ֆիզիկական փոխազդեցություն (կույրին ձեռքից բռնելը, կոնտակտային պար և այլն)

տակեվիկա (ձեռքսեղմում, ուսին խփելը)

Մարդու պրոբլեմը գտնվում է հաղորդակցման բոլոր ասպեկտների ուշադրության

կենտրոնում:

Չաղորդակցման կոմունիկատիվ ասպեկտի սահմաններում զրուցակիցների հոգեբանական

փոխազդեցությունը կենտրոնանում է կոնտակտի պրոբլեմի շուրջ: Այդ պրոբլեմը

նպատակահարմար չէ տանել միայն կոմունիկատիվ վարքի կարողություններին և

հմտություններին ու հաղորդակցման միջոցների օգտագործմանը: Կոնտակտի հաջողության համար ամենակարևորը զրուցակիցների՝ միմյանց ընկալումն է: Հոգեբանական կոնտակտը սկսում է զրուցակիցների արտաքին պատկերի կոնկրետ-զգացական ընկալումից զգացական օրգանների միջնորդությամբ:

Հաճելիության-տհաճության ռեակցիան արտահայտվում է միմիկայում (դիմախաղում), ժեստերում, դիրքում, հայացքում, ինտոնացիայում, որոնք վկայում են այն մասին, որ դուր ենք գալիս միմյանց, թե՛ ոչ:

Կոնտակտի առաջացման փուլում նշանակալի դեր է պատկանում մարդու արտաքին հմայքին, որի

շնորհիվ նա ձեռք է բերում հատուկ, առավել բարձր կոմունիկատիվ պոտենցիալ: Այդ պատճառով,

մարդիկ, որպես կանոն մեծ ուշադրություն են դարձնում իրենց արտաքին տեսքին:

Ջրուցակիցների սուբյեկտիվ գնահատականը ըստ արտաքին տեսքի տեղի է ունենում «դուր է գալիս-դուր չի գալիս» չափանիշով: Եթե մարդը մեզ դուր է գալիս, նա ավելի հեշտ է մեզ հետ կոնտակտի մեջ մտնում, եթե ոչ՝ նա ստիպված է լինում հաղթահարել մեր բացասական էմոցիոնալ-

էսթետիկ վերաբերմունքը իր արտաքին տեսքի նկատմամբ: Ճանապարհին նա պետք է ցուցաբերի

ուրիշ, իր անձի նույնքան արժեքավոր առավելություններ, որակներ: Դա կարող է լինել

ինչպես հրապուրիչ հոգեբանական հատկություններ (խելք, բարություն և այլն), այնպես էլ

գործնական որակներ, սոցիալական ստատուս, որոնք արտահայտվում են վերբալ և ոչ վերբալ վարքի տարբեր

ձևերում: [10]

Հաղորդակցման ինֆորմացիոն ասպեկտի սահմաններում տեղի է ունենում հոգեբանական պրոբլեմների շրջանակի լայնացում, որոնք կապված են հաղորդվելիք փոխանցման և ընկալման

հետ: Ինֆորմացիան իր մեջ ներառում է մարդկանց կողմից այն ամենի ճանաչման

արդյունքները, ինչը շրջապատում է իրենց, մարդկանց փորձը, որում միավորված են բոլոր

ժամանակների և ժողովուրդների ինդիվիդուալ հաջողությունները: Այն իրենցի

ներկայացնում է մարդկային ժառանգությունը, որը կոմունիկացիայի միջոցների

շնորհիվ փոխանցում է սերնդեսերունդ, յուրաքանչյուրի համար ստեղծելով կյանքի ու

զարգացման նոր պայմաններ:

Չաղորդակցման ինֆորմացիոն ֆունկցիաները կարելի է մեկնաբանել որպես մարդու

ադապտիվ վարքի ժառանգման միջոցների և տեսակային փորձի փոխանցման յուրատեսակ մեխանիզմ:

Այդ պատճառով ինֆորմացիան ձեռք է բերում առավել մեծ արժեք մարդկային գործունեության

ցանկացած ոլորտում, իսկ գիտակ մարդու ստատուսը բարձրանում է մեր աչքերում: [7, էջ 75-110]

Չաղորդակցության դժվարությունները

Չաղորդակցման դժվարությունները կարող են դիտարկվել հոգեբանության տարբեր ճյուղավորումների դիրքերից՝ ընդհանուր հոգեբանության, տարիքային, մանկավարժական, սոցիալական, աշխատանքի, իրավաբանական և բժշկական հոգեբանության դիրքերից:

Չաղորդակցման ընթացքում նրա մասնակիցների մոտ դիտվում են տարատեսակ վիճակներ, յուրաքանչյուրի մոտ արտահայտվում են այս կամ այն հոգեկան հատկությունները:

Ըստ պատճառականության՝ դժվարությունները բաժանվում են 2 խմբի՝ առաջնային և երկրորդային:

Առաջնային դժվարությունները կապված են մարդու բնական հատկությունների հետ, դրանք տարբերվում են առաջացման առավել կոշտ նախապայմանավորվածությամբ և անխուսափելիությամբ:

Նրանց առաջացման համար մեծ դեր են խաղում կենսաբանական, հոգեֆիզիոլոգիական, անձնային

հատկությունները. վերջիններիս թվին են պատկանում ագրեսիվությունը,

տազնապայնությունը, ռիզիկոությունը և այլ անձնային առանձնահատկությունները,

որոնք սերտորեն կապված են խառնվածքի հետ:

Երկրորդային դժվարությունները կարող են լինել պսիխոզեն և սոցիոզեն: Պսիխոզեն

դժվարությունները որպես հոգեբանական տրավմաների, սթրեսի, ծանր ապրումների և

ֆրոստրացիայի հետևանք, իրենց ետևից բերում են որոշակի նեգատիվ փոփոխություններ, նախ և

առաջ վստահելի հաղորդակցման ժամանակ: Ակնհայտ է պսիխոզեն դժվարություններ և հոգեսոմատիկ

հիվանդությունների փոխադարձ պայմանավորվածությունը: Սոցիոզեն դժվարությունները

հանդիսանում են արտաքին խոչընդոտների, էնոցիոնալ և սոցիալական կոնտակտների անհաջող

փորձի, հաղորդակցման որոշակի պայմանների հետևանք:

Ընդհանուր հոգեբանության դիրքերից մենք իրավասու ենք ոչ միայն ուսումնասիրել

բոլոր նոր մարդկանց բնորոշ հաղորդակցման ֆենոմենները, նրա ընթացքի կանոնակարգը և մեխանիզմները, այլ նաև դուրս բերել հաղորդակցման դժվարությունները, այսինքն՝

հոգեկան պրոցեսների, անձի վիճակների և հատկությունների այն բնութագրիչները, որոնք

հոգեբանորեն օպտիմալ հաղորդակցման չափանիշներին չեն համապատասխանում: Հոգեբանորեն

օպտիմալ կարող է լինել այն հաղորդակցումը, որում գրուցակիցներին հաջողվում է

պահպանել նրանցից յուրաքանչյուրի համար ցանկալի սուբյեկտի դիստանցիան:

Քանի որ հաղորդակցումը դա առնվազն 2 անձանց փոխազդեցությունն է, ապա նրա

ընթացքում դժվարությունները (սուբյեկտիվ) կարող են առաջանալ մասնակիցներից մեկի կամ

միանգամից երկուսի կողմից: Եվ դրանց հետևանքը սովորաբար դառնում են նպատակին մասնակի կամ

ամբողջապես չհասնելը, մոտիվի բավարարված չլինելը կամ ցանկալի արդյունքին չհասնելը:

Դրա հոգեբանական պատճառները կարող են լինել ոչ իրական նպատակները, գործընկերոջ ոչ

ադեկվատ գնահատականը, տվյալ իրադրությանը ոչ համապատասխան հաղորդակցման միջոց ընտրելը: [3,

էջ 398-413]

Հաղորդակցման դժվարություններ կարող են առաջանալ նաև նրա մասնակիցների միջև

տարիքային տարբերության պատճառով: Դրա հետևանքն է հանդիսանում նրանց կենսափորձի

անհամապատասխանությունը, ինչը հետք է թողնում ոչ միայն աշխարհի պատկերի՝ բնության,

հասարակության, մարդու, նրա նկատմամբ վերաբերմունքի վրա, այլ նաև հիմնական կենսական

իրադրություններում կոնկրետ վարքի վրա: Վերլուծելով դժվարությունները, որոնք կապված են

հաղորդակցվողների տարիքի հետ, պետք է անպայման հաշվի առնել յուրաքանչյուր տարիքային

խմբի հոգեբանական բնութագիրը և ուղղում մտցնել այն բանում, թե ինչպես են դրանք

արտահայտվում երեխայի, դեռահասի, պատանու, աղջնակի, օրիորդի, հասուն տղամարդու և կնոջ,

տարեցների և ծերերի մոտ:

Մանկավարժական հոգեբանության տեսանկյունից առանձնացվում են հաղորդակցման այլ դժվարություններ: Մանկավարժության մեջ վաղուց հաստատվել է այն պնդումը, որ առանց պահանջի չկա դաստիարակություն: Բայց շատ մանկավարժներ, չգիտես ինչու, որոշել են, որ այդ

թեզի իրացումը ենթադրում է անպայման սովորողների ղեկավարության ավտորիտատ (սուբյեկտ-

օբյեկտային) ոճ, ինչը բնականաբար կարող է շատ պրոբլեմների հանգեցնել:

Բնականաբար, հաղորդակցման հոգեբանական դժվարությունների բնույթը փոխվում է ուսուցչի մանկավարժական վարպետության բարձրացման հետ: Մանկավարժական հաղորդակցման

դժվարությունները կարելի է միավորել 3 հիմնական խմբի մեջ՝ ինֆորմացիոն,

ռեգուլյատիվ (կարգավորիչ), աֆեկտիվ:

Ինֆորմացիոն դժվարությունները արտահայտվում են ինչ-որ բան հաղորդելու, սեփական

կարծիքը արտահայտելու, ճշտելու, ավելացնելու, պատասխանը շարունակելու, միտքը ավարտելու

անկարողության մեջ:

Ռեգուլյատիվ դժվարությունները կապված են դաստիարակվողների ակտիվությունը

արթնացնելու անկարողության հետ:

Աֆեկտիվ ֆունկցիաների իրացման դժվարությունները արտահայտվում են սովորողների հետ համաձայնվելու, լեզվական ձևակերպման ճշտությունը ընդօժեցելու, լավ վարքի համար խրախուսելու, ակտիվ աշխատանքի անկարողության մեջ:

Հաղորդակցման մեջ, որպես կանոն, մասնակցում է մի փոքր խումբ, որի անդամները, ըստ իրենց կենսական դիրքորոշումների, ըստ դիրքի, որը նրանցից յուրաքանչյուրը կցանկանար զբաղեցնել խմբում, ըստ գործընկերոջ հետ վերաբերվելու ձևի՝ կարող են կանգնել

բոլորովին հակառակ դիրքերում:

Բնական է, այդ ամենը չի կարող չառաջացնել դժվարություններ նրանց հաղորդակցման

մեջ, երբեմն էլ չառաջացնել կոնֆլիկտներ: Բացի այդ, չի կարելի հաշվի չառնել այն

ազդեցությունը, որը գործում է հաղորդակցվողների վրա նրանց շրջապատը: Այդ շրջապատը կարող

է տարբեր նշանակություն ունենալ նրանց համար:

Չաղորդակցման սոցիալ-հոգեբանական դժվարություններ հաճախ ունենում են

ղեկավարները: Այստեղ կարևոր են համարվում ղեկավարության միջավայրում հաղորդակցման

դժվարությունների երեք խումբ.

Առաջին խումբը կազմում են դժվարությունները, որոնք կապված են անձի՝ խմբի մեջ

ներգրավելու պրոցեսի հետ: Դրանք կարող են բնութագրվել ղեկավարների հետևյալ անձնային

առանձնահատկություններով. այլ մարդու նկատմամբ հետաքրքրության բացակայություն,  
ինքնամփոփություն, ներքին շփոթվածություն:

Երկրորդ խմբի մեջ են մտնում հաղորդակցման դժվարությունները, որոնք կապված են

հարաբերությունների զարգացման, խմբային պրոցեսների, խմբի կազմավորման, խմբային  
միավորի պահպանման հետ:

Երրորդ խմբի մեջ են մտնում հաղորդակցման դժվարությունները, որոնք կապված են

խմբային գործունեության միջոցների բացակայության հետ. սեփական մտքերը՝ հստակ և  
պարզ

արտահայտելու անկարողություն, քննարկումներ, դիսկուսիա անցկացնելու անկարողություն  
և

այլն:

Չաստատված է, որ հաղորդակցման մեջ դժվարություններ ունեցող մարդկանց  
բնավորության

մեջ առկա է զգայուն, աստենոնկրոտիկ հատկությունների կոմպլեքս, ինչը վկայում է նրան  
բնորոշ չափազանց տպավորվողականության մասին:

Անձնային մակարդակում այդպիսի մարդկանց մոտ առկա է տազնապի բարձր մակարդակ,  
էնոցիոնալ

անկայունություն, վարքի բարձր ինքնակարգավորում:

Բացի այդ, նկատվում է ինքնաբացասման, ինքնաստորացման բարձր մակարդակ:

Չաղորդակցման սպեցիֆիկ դժվարություններ բնորոշ են վառ արտահայտված  
տազնապայնությամբ անձնաց:

Չաղորդակցման դժվարությունների ևս 1 տեսակ կապված է ամաչկոտության հետ, այսինքն՝  
անձնային հատկության հետ, որը առաջանում միջանձնային ոչ ֆորմալ հաղորդակցման

որոշակի իրադրություններում և, որոնք արտահայտվում են նյարդա-հոգեկան լարվածության և

հոգեբանական դիսկոմֆորտի մեջ:

Չաղորդակցման դժվարությունները կարող են դիտարկվել նաև բժշկական հոգեբանության տեսանկյունից: Այսպես, Վ. Մյասիշևը, հենվելով սեփական հարուստ կլինիկական փորձի վրա,

նշում էր, որ ներոզի զարգացման հիմքում ընկած է ներանձնային և միջանձնային

կոնֆլիկտների ոչ պրոդուկտիվ (արդյունավետ) ընդլայնումը, որոնք արտահայտվում են հաղորդակցման հոգեբանական դժվարություններում:

Շրջապատողների հետ հաղորդակցման հատուկ դժվարություններ են ունենում նրանք, որոնք տառապում են լոզոնկրոզով: Չետագոտությունները ցույց են տալիս, որ նրանցից յուրաքանչյուրի մոտառկա է անլիարժեքության սեփական զգացումը, որը դեֆորմացնում է լոզոնկրոտիկ անձի վերաբերմունքը իր կենցաղի մյուս կողմերի նկատմամբ:

Չաղորդակցման սպեցիֆիկ (յուրահատուկ) դժվարություններ կան նաև հոգեկան այլ շեղումներով հիվանդների մոտ, ինչպես նաև տարբեր սոմատիկ հիվանդություններով տառապողների մոտ:

Չաղորդակցման մեջ հոգեբանական դժվարությունների վերացմանը ուղղված աշխատանքի հիմնական ուղղություններից մեկը հանդիսանում է ինդիվիդուալ (անհատական)

հոգեբանական կոնսուլտացիան, վստահելի երկխոսական հաղորդակցումը մարդկանց հետ, որոնց մոտ

չեն կարգավորվում հարաբերությունները իրենց շրջապատում, իրենց համար սուբյեկտիվորեն

կարևոր մարդկանց հետ: [7, էջ 75-110]

## Գրականություն

Սլ. Նալչաջյան. Հոգեբանության հիմունքներ 1997թ.

Ананьев Б.Г. "Избранные психологические труды" М. 1980, с 129-266

Бодалев А.А. "Личность и общение" М. 1983г., с 21-82

Куницина В.Н., Казаринова Н.В., Погольша В.М. "Межличностное общение"  
Питер 2003г. С 398-413, 414-451

Леонтьев А.А. "Психология общения" М. 1997г. С 73-113

Мясищев В.Н. "Личности и неврозы" М. 1960, с 210-217

Платонов Ю. П.. "Социальная психология поведения". С 352-355

Сухов А.А., Деркач А.А. "Социальная психология". С 75-110

"Сборник статей"-под ред. Б.М. Ломова. М. 1989 с 55.

Ան. Նազարյան. Գործարար հաղորդակցություն., Երևան 2001.

